

ՏՆՕՐԵՆ - ԽՄԱՐԱԳՐԱԳՆԵՑ  
7. ՄԱՍՈՒՐԵԱՆ

ԲԱԺՍՆՈՐԳԱԳՐՈՒՅԻՆ

ՏՂԵԿԱԸ	500 ՂՐԵ
ՆԵՑԱՍՍԵԱՑ	250
ԵԲԱՍՍԵԱՑ	150

Բաժանորդագրությունը կ'սկսվի  
ամեն ամսոյ 1 ին և 15 ին

100 ՓԱՐԱ

ՕՐԱԹԵՐԹ ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԻԱՂԱՔԱԿԱՆ

Fondateur

M. Mamourian

Directeur - Rédacteur en chef

H. MAMOURIAN

ARÉVÉLIAN NAMOUL,  
JOURNAL ARMÉNIEN  
QUOTIDIEN

100 ՓԱՐԱ



# ԱՆՔՈՂԱՐԿԵԼԻ ԸՆՄԱՐՏՈՒԹԻՒՆՆԵՐ

Ա.

Հայաստանի մտաւարտ կամ հեռաւար ճակատագիրն զեռևս անորոշութեան մէջ կ'ընթացի Ապագայ հայ ինքնօրինութեան մը հիմքերն տակաւին չեն դրուած: Հայկական առանձնաշնորհումներու յանձնառութիւնն կ'տարբերի Համաստեանական պետութեանց միջև: Ամերիկա իր վերջին բառն չէ արտասանած, Անգլիա և Ֆրանսա Մ. Նահանգաց վճիռին կ'սպասեն:

Այս ամեն կարեւոր գիծերուն տեղեակ ենք, գիտակից և հազարապից ու հեռի հեռ ճգնաժամային վայրկեաններ կ'ապրինք. որոնք յղի են աւետիսներ բերելու, որոնց մեր բաղձանքներուն համապատասխան ըլլալու մտղթանքն ամեն ժամ ու վայրկեան կ'կրկնենք:

Լաւ ուրեմն, երբ ամենակարեւորն, կենսականն զեռ չէ իրականացած, երբ անձանթին առայժմ կ'ցցուի մեր առջև, ինչո՞ւ համար անպարտաւոր մը ցոյց կ'տրուի ամեն կողմէ, հայկական ապագայ կառավարութեան նկարագիրն սեղանին վրայ դնելու և անօգուտ վիճարանութիւններով, անիմաստ սաղարաններով զիրար չհասկնալու:

Ընկերվարութիւն և ասիակաւարութիւն իրար կ'իտանուին, որպէս թէ՛ երկու նոր գիւտեր հնարուած ըլլալին համանման ու նոյնատես և անոնց չգովնտան ու չառագոյն ընել յարմար դատուէր, յաճախողներ որտալու համար:

Տիեզերքի վրայ հիմնուած, անհետացած, վերակենդանացած, կորուսած բոլոր ազգերն ու ժողովուրդներն, ներկայիս մէջ գոյութիւն ունեցող բոլոր պետութիւններն ու ազգութիւններն մեր ուսումնասիրութիւններուն և գիտակցութեան առարկայ չեն միթէ:

Հին ու նոր, ընդ միշտ անհետացած ու այժմ գոյութիւն ունեցող ազգերէն ո՞րն է որ ծայրայեղ արմատական, արդի վարդապետութեամբ՝ ընկերվարական սկզբունքներու համաձայն սարքեր ու կառավարուէր է:

Այս շատ որոշ ու պարզ հարցումն ամեն սք կրնայ ինքնաբերաբար բնել և եթէ դատողութիւն, բանավարութիւն ու արամբարանութիւն ունի, կրնայ ինքնիրեն պատասխանը ստանալ:

Աշխարհիս ներկայ գրութեան մէջ, ինքնաբերաբար կ'հիանանք այն ժողովուրդներուն վրայ, որոնք ազատ սկզբունքներու վրայ հիմնուած օրէնքներով կ'կառավարուին և որոնք իրենց այդ անկախութեանց շնորհիւ բարգաւաճ ու վարդացած դիրքի մը արժանացած են քաղաքակրթութեան շաղկիւն մէջ:

Կրնա՞ք միթէ չընդունիլ թէ՛ Ամերիկեան, Անգլիական, Ֆրանսական ժողովուրդները չեն վայելիլ լիակալ անհատական ազատութեան շնորհած բոլոր բարիքները կրնա՞ք միթէ ակնհայտ չըլլալ անոնց վայելած առանձնաշնորհմանց, անոնց կառավարական գրութեանց, որոնք հիմնուած են հաւատարմութեան և ազատութեան բացարձակ սկզբունքներուն վրայ, և միթէ անոնք ընկերվարական ծայրայեղ սկզբունքներու որդեգրումով կ'կառավարուին: Եւ կրնա՞ք ուրանալ թէ այդ սահմանադրական երկիրներուն մէջ ամեն ջանք ի գործ ջգրուելու բարեխաւքու համար գործաւոր և հողագործ դասակարգին վիճակը:

Նմանապէս՝ ո՞վ կրնայ պնդել կամ հաստատել թէ՛ կայսերական Անգլիան նուազ ազատական է քան հանրապետական Ֆրանսան և ասիակաւարական Ամերիկեան և նոյն իսկ յառաջ պիտի երթանք ըսելու թէ՛ Անգլիա այդ երկիրներէն աւելի ազատական հիմնադրութիւններ կ'կրթարկէ և անոր տիրապետութեան տակ սարդո ժողովուրդներն շատ աւելի բարեկեցիկ վիճակ մը ունին քան միւս ազգութիւնները:

Եւ այսօր Եւրոպական ցամաքամասին վրայ գոյութիւն ունեցող ժողովուրդներն անոնց մէջ գասելով նոյն իսկ գաշակցային Զուլցերիան՝ ընկերվարական սկզբունքներն անայլալ ընդունած և կիրարկութեան գրած են:

Այսօր չկայ աշխարհիս վրայ ազգութիւն մը, ժողովուրդ մը, կառավարութիւն մը որ ծայրայեղ վարդապետութիւններու առջև խոնարհի, զանոնք որդեգրէ և անոնց գործադրութիւնն իր երկիրներու մէջ կիրարկելու տգիտութիւնն ունենայ:

Ռուսոյ վիճակն՝ ծայրայեղ գաղափարներ մտուցանողներու թող իբրև կենդանի օրինակ ծառայէ, ուր իրարու խօսք չեն հասկնար, և ընկերվարական սկզբունքներն չարաչար գործածելով՝ իրարմէ կողպուտներ կորզելու, ծուլութեան մէջ փարթած կեանք մը վայելելու, առանց աշխատութեան հողատէր դառնալու մոլուցքէն տարուած, սովի ու անօթութեան մատնեցին, և մարդակերպ գազաններ զարձած զիրար կ'յոշոտեն, զիրար կ'ըղկտնու Որովհետև ազատութեան խաւարն չարաչառ թէկերով կ'տարածուի այդ անասնացած ժողովուրդին վրայ և բանականութիւնն բացարձակապէս կ'բացակայի այդ թըլուա մութիկներէն:

Ծայրայեղ սկզբունքներով կամ ընկերվարական հաւատալիքներով ժողովուրդներն կառավարելու ժամն զեռ շատ հեռու է հնչելէ, աշխարհ զեռ պատճառուած չէ այդ անմարտելի պատան հուլ տալու, անմարտողութեան պիտի բռնուի, ինչպէս օրինակ Եգիպտոս, հետևաբար պատրանքներու հուսէ չվագնք և մեր վագրով չմտորենք ու չուարեցնենք նաև մեր խեղճ ու աստապած ժողովուրդն որ ասայժմ հայրենիք մը ունենալ կ'բաղձայ և խաղաղ վարդացումի մը կարօտն կ'ընէ, որպարագաս և օրինապատ հաւատարմական զրութեամբ մը:

Եւ երբ այն մեծ ու պատկառելի ազգերն, որոնցմէ մենք օրինակ պէտք է աւանդ, կ'մաքաւին ու կ'սպորին ծայրայեղներու զէժ, ամեն գնով հաստատուն պահելու համար ներկայ ընկերական հիմնաքարերն, ներկայ տիրող ըսկզբունքներու վրայ կերտուած քաղաքակրթութեան հոյակապ շէնքը որքան անօթալի պիտի ըլլար մեզի համար, զեռ մեր գլուխն հանգչեցնելու բոյն մը մեզի չընտրուած, ելնել Բարլ Մարքսական, ընկերվարական ծայրայեղ գաղափարներ տարածելու աշխատին ու անոնց նուիրուիլը:

Գուհիկ օրինակներու մէջ բերուածներ չենք ուզեր ընել, սակայն չափ մը զննելու ենք մեր ազատականութեան, մեր շինովի ու ծաղրելի ազատականութեան, որովհետև եթէ իրապէս կ'փոփոքինք ապագային մէջ արեւելքի քաղաքակրթիչ ժողովուրդն գառնալ, չենք կարող երբէք մեր այդ նպատակին հասնիլ, մինչև որ չփոխենք մեր խորհուրդ և գործելու եղանակը:

Եւ նոյն իսկ յառաջ պիտի երթանք ըսելու, որովհետև մեր համոզումն է և մեզի հետ շատ շատերու, որ մենք անուշազն յիսուն տարի՝ պէտք ունինք ամենալոր իշխանութեամբ գործադիր իշխանի մը բացարձակ տիրապետութեան, որպէսզի մեր միտքերն գտուին, մեր գլուխներն ամբապնտին մեր ուսերուն վրայ, մեր սերունդներն խաղաղ գաստիրապետութիւն մը ստանան, ժողովուրդն աշխատութեան վարժուի, վաճառական հանդարտ գլխով իր գործին հետամուտ գառնայ, գործարանատէրն առանց երկիւղի իր գործարանն շինէ, հանքերն շահագործուին, գետերն ու լիճները օգտագործուին և վերջապէս խաղաղ աշխատանքով մը գանք ու հասնինք անկախ ու խորհրդարանական կեանքի մը խոհական եւուզեցին:

Ասայժմ, մեր ներկայ վիճակին մէջ, ո՞չ Պօղոս Նուպար մը, ո՞չ Պատիսեան մը, ո՞չ Ահարոնեան մը ոչ ոք կրնայ այս ժողովուրդին ճակատագիրն վարել: մեզի համար շատ կանուխ է խորհրդարան, պատասխանատու նախարարութիւն, ժողովրդական քուէարկութիւն և անոնց նման նոյն իսկ սահմանադրական կարգ ու սարքեր:

Այս ճշմարտութիւններն թերեւս ծանր կ'ընեն տաք գլուխ և ինքզինքնին ամենազէտ գուռանդներու համար, բայց մենք ապագան կ'նախատեսենք և չենք զեպելի ճշմարտութիւնն մերկայարանաց գնելու մեր ժողովուրդին առջև:

Ապագան ցոյց պիտի տայ թէ՛ մեր տեսութիւններն ուղիղ են, թէ՛ և սըրտանց կ'մաղթենք որ անոնք չիրականանային:

Հ. Մ.

## ՀՄՈՂ ԵՐԲԸ

Այս իրիկուն երգս հեծկիցանի մ'ընե յոյ:

Կ'երգե՛մ . . եւ երեքի շացած չեի այսպէ՛ս:

Այս իրիկուն իմ երգիս մեջ կարեցան շիք առ շիք բոլոր արցունքները իմ կարօսիս — ինչպէս հիւսնդ ծաղիկներ ծովերու մեջ . . .

Այս իրիկուն իմ երգիս մեջ բոսէ բոլոր հեծկիցանիները իմ հոգիս — ինչպէս մեռնելու գացող բոջուկներ հովերուն մեջ . . .

Իմ սիրակալնս, իեզի՛ այս հծծող երգս . . .

ՄԱՆՆԻԿ ԳԵՐՊԵՐԵԱՆ

## ՀԱՅՏԵՆԵՐԻ ՄԵՋ

Հայոց ներկայ կացութեան մէջ բազմազան և ալլազան ձեւերու տակ կ'ներկայանան անհուն ու անսպասկարիքներ, անոնց թուումն մասնացը ընելու նպատակ չունիմ, սակայն այդ անհրաժեշտութիւններուն գոհացում տալու մէջ ոչ մէկ շարժում, ոչ մէկ ձեռնարկ գիտելի կ'ըլլայ:

Նախ և առաջ ամենքս ալ տաւնց ամենապիտք բացառութեան կ'ընդունինք թէ՛ հալը կրթուելու և գաստիրակուելու պէտք ունի, բայց այդ ստիպողական նպատակին հասնելու համար որեւէ ըւրջ ձեռնարկի մը միջամուխ չէ եղած ցայտօր:

Ո՞ր են վարժապետանոցները, ո՞ւր են բարձրագոյն կրթութիւն ջամբելու համար հարկ եղած սուսումնասիրանները ոչինչ ու գործաւ աշինչ, այդ կարեւոր հիմնարկութեան վրայ խորհող չկայ:

անգրագարձող չկայ, որովհետև ոչընչութիւններէ փրկուիլ և անօգուտ խնդիրներով ժամավաճառ ըլլալէ զբուխ բարձրացուցած չունին, այս տեսակ կենսական խնդիրներու վրայ անգրագասնալու մասնագիտութիւն կամ իշխանութիւն ունեցող վերին մարմինները:

Եթէ կուզենք մարդեր պատրաստել, եթէ փափաքող ենք առողջ և բանիմաց քաղաքացիներ ունենալ, անոնց պատրաստութեան համար անհրաժեշտ եղող գործիքներ նախ և առաջ հարկ է որ մտածենք:

Երկուստայր կուգուտու, իրենց նուիրուծին գիտակից գաստիրակներ և ոչ թէ խմատակներ պատրաստելու միջոցներ հարկ է որ խորհինք և ասանց ժամավաճառութեան անոնց պատրաստութեան համար միջոցներ կ'գործ գնենք:

Մի որպացած սերունդը, մեր ծընողադուրի մանկութիւնը, վաղը գաստիրակներու պէտք պիտի ունենայ և մենք չպիտի յաջողինք տրամադրել գանոնք, ինչո՞ւ, որովհետև չենք քաշալերու ուսուցչութեան ասպարէզին նուիրուելու հակամէտ թիկնածուներն, որովհետև չենք կարող քոնացնել գանոնք իրենց պաշտօնի կիրառութեան սրտուն, լիութի վարժապետութեամբ:

Եւ այս կոցութեան պատասխանուտաւ ենք ամենքս ալ, ասանց բացառութեան և խարտութեան:

Անկարելոք խնդիրներու համար ժամավաճառ ըլլալու միջոց ու ժամ կը գաննենք. իսկ կարեւոր հարցերու վրայ լրջօրէն ծանրանալու ոչ միջոց և ոչ ժամանակ ունինք, բայց սեպիլ ցաւալին գոյութիւն ունի որու մասին ասայժմ չեմ ուզեր ծանրանալ և պիտի մաղթէի սրտանց որ առիթ չտային ինծի անգրագասնալու:



Տեղական Լուրեր

ՌՈՒՄՅԱԿԱՆ հրատարակող Պ. Բազմի... քոթի, առջի օր այցելած է հելլէ բար...

ՍԵՂԱԿԱՆ Ֆրանսերէն թերթի... «Էնտէրտանտ» կը գրէ, տեղւոյս յոյն...

ԱԳՆԻՍՈՒՐԻ փոխտնտեսներէն... յանձնախումբ մը երթալով Գեր. Սրբա...

ԿԸ ՏԵՂԱԿԱՆԻ ԹԷ Զուտաւար... նի մէջ գտնուող Փաքը—Լախոյ փո...

ՍՅԱՆԻՍՏԱՆ «Վերակարգում» մեր... մտ օրէն քաղաքս հասնելով մեր հը...

ԱԹԵՆՔԻՆ կը հեռագրեն որ, Բի... րէայի Առեւտրական Սենտակը կը ծա...

«ՄՍՍՍՎԱԹ»-ի գրածին համեմատ... թուրք յանձնախումբ մը Ալաշէհի...

ՀԱՆՐԱՅԻՆ առողջապահութեան տը... նօրէնութիւնը հետեւեալը կը ծանո...

ՀՐԱԻԷՐ

«ՁԱՐԹՕՆԻՔ» Լուրերն. Միտութեան... երկուսն ըստ անգլիացիները կը հրա...

- 1. — Իմացնել բոլոր անգլիացիներուն
2. — Ճշգրտագործութիւնը և անհրա...

ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ՎԱՐՆԻՈՐ

Միտարարեան վարժարանի մէջ տե... ղի ունեցող Անգլիացիներ և Գերման...

Յըմեմբէն, Պ. Օննիկ թարգմանեան, Անգլ... — Կարգաւորութեամբ Անգլիացիներ, Պ. Տէյլի...

ԵՐԻՏ. ԳԻՇ. ԴԱՍՍՍՍՈՒՆԸ.

Յանյան-Յան

ԻՋՄԻՐԻ ՍԱԿԱՐԱՆ

Իգմբ, 25 Հոկտ. 1919

Table with 2 columns: Item name and Price. Includes items like Յոնն սեղան, Յոնն Ուշաք, Մետաք, etc.

ՀԵԼԼԷՆ ՊԱՐԵՆՆԱՌՈՐՄԱՆ ՅԱՆՆԱԿԱՆՈՒՄՔԻՆ

Իգմբի Հեղին Կարենաւորման յանձնախումբը հետեւեալը կը ծա...

Բանակին ճերմակեղէններու լը... ւացքը նուազագի դրուած է ամսոյս...

Անոնք որ կուզեն մասնակցել նը... ւազուրդին, պայմաններու մասին կըը...

Հարգողք ԹէթիլՊիլիՍ

ՀինԱԳԻՐ կայ Պ. Օ. Կարապետեանի հասցէին (Ամերիկեան Գոլէճ) Մկրտիչ...

GLAXO FOOD

Կովո կար փոշիացած արե... րիլիզէ կաստեայ սնունդ տալոյց ծերերու

հիւանդկախներու արգիւններու

Ընդունուած մեծ Բրիտանիո հիւանդանոցներու մէջ:

Յանձնարարուած Անգլիական րոշոր թշկական մարմիններու կողմէ:

Ընդհանուր Մթերանոց.— ՏՐՈՒԿԻ ՍԱՆԹՐԱՆ ԳՐՈՒՆ ԼԹՏ.

Advertisement for U. Pearce & Co. featuring a portrait of a man and text in Armenian: ՄԱՆՁԵՍԹԵՐԻ Ա. ԲԻՐՍ ԵՒ ԸՆԿ. ՏՈՒՆԸ (A. Pearce & Co.)

ՀՐԱԻԷՐ

Այս կիրակի Հոկտ. 26 (4. Ե.) ժամը 3ին Ս. Գ. Հնչակեան կուսակցութեան բոլոր ընկերները ստիպո...

Ս. Գ. Հ. ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ

Իգմբ Մանյան

ՎԵՐՋԻՆ ՀԵՌԱԳԻԲԵՐ

26 Հոկտեմբեր 1919

ԹՐԻԱԿԱՆ ԽՆԴԻՐԸ

Ֆրանսական մամուլը թուրքիոյ հարցը քննելով, կ'ըստարարէ թէ՛ ֆրանսա չիքնար հուսանել որ թուրքիոյ նոյն իսկ սքողիոյ յանձնառութեան մը են...

ԼՕՅՏ ՃՕՐՃԻ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԻՔ

Անգլիոյ վարչապետն Լոյտ Ճօրճ յայտարարած է թէ՛ Բարձրագոյն Խորհուրդը Ամերիկայէ աջակցութիւն ուղարկելու և թուրք Լարցիոյ լուծումը փութացնելու համար...

ՍՈՒՐԻՈՅ ԽՆԴԻՐԸ

Յառաջիկայ երեքշաբթի կ'մտնի Ֆայսալ երկար վիճարանութիւն մը պիտի ունենայ Մ. Գլէմանսօր հետ, Սուրիոյ խնդրոյն նկատմամբ:

ԻՌԱԿՐԱՐԱՆԻՆ ԳՈՒՄԱՐՈՒՄԸ

«Իֆնամ» թերթին կարծիքով ըն բուած երեսփոխաններն պիտի գումարուին Պրուսայի մէջ:

ԹԱԼԱԹ ԵՒ ԸՆԿ

Լուր կ'ընէ թէ Թալաթ և Ճէմալ Պէրլինէ մեկնած են Կովկաս երթալով Էնվէրի հանդիպելու համար:

ՍԱԼԻՉ ՓԱՇԱ ԵՒ ԱԶԳԱՅՆԱԿԱՆՔ

Թուրք մամուլը կ'կարծէ թէ՛ Սալիչ փաշա այս ինչպիսի կ'տեսակցի Ա. մաթաի մէջ, Մուսթաֆա Բէմալ փաշայի և Բէմալի, Պէքի Սամի և Քարա Վաթիֆ պէյերու հետ:

ԿՐԿԻՆ ՀԵՐՔՈՒՄ

Ներքին Գործոց նախարարութիւնը հեռագիր մը ստացած է Փաքը-Ասիոյ և Բուժէլի իրաւանց պաշտպան կուսակցութիւնէն թէ՛ Էնվէր և Հալիլ փաշաները որեւէ դիմում ըրած չեն անոնց ընկերութեան մտ, թէ անոնց հետ որեւէ յարաբերութիւն չունին և չեն ալ գիտեր թէ ուր կ'գտնուին:

ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ

Գրուածնց պաշտպան կուսակցութիւնը չըջարեակնով մը բոլոր իր մասնաճիւղերուն կ'ձանուցանէ թէ՛ որչափ է շմիջամեղ արտքէն որեւէ կերպով ընտրողական գործողութեանց մէջ և չպաշտպանել որեւէ թիկնածութիւն:

ՍԱԼԻՉ ՓԱՇԱԻ ԸՆԹԱԳԻՐԸ

Բ. Գրան շրջանակներուն մէջ երկի իրիկուն կ'հաւատալին թէ կարեւոր հեռագիր մը հասած է Սալիչ փաշայէ: Այդ հասած հեռագիրն խիստ գողանի կր պահուի նախարարաց Խորհուրդն գողտած է իր նիստին մէջ: Իրազիկ են սակայն թէ՛ ծովային նախարարը տեսակցած է Մուսթաֆա Բէմալ փաշայի հետ:

ՖՐԱՆՍԱԿԱՆ ՆԱԻՍՏՈՐՄԸ

Բարիզէն կ'տեղեկացնեն թէ Ֆրանսական նուազագիծը երկար շրջան մը պիտի բնէ Սուրիոյ ծովեզերքներուն կողմ:

ԶԻՆԻՐԱԿԱՆ ՀՐԱՄԱՆԱՏԱՐ

Մայրաքաղաքէ կ'հերպարուի սր զօր. Եռասօփ Իզլէթ փաշա, հրամանաւոր անուանուած է Այալնի նահանգին մէջ գտնուող բոլոր տղաքոյն պժիւրուն:

ԹՈՒՐԿԵՐՆ ԵՒ ԻՏԱԼԻՆ

Թուրք ժողովուրդը՝ Փաքը-Ասիոյ Բուսթան արշաւախումբին հրամանաւորին հետաքրով մը իր շիրմ երախտ պիտութիւնը կ'այտնէ, Իտալական զօրաց կողմէ ի գործ դրուած մարդասիրական գործին համար, փրկելով իսլամ տարազերներու կեանքերը:

ԳԵՐՄԱՆԱՅԻՔ ԿԸ ԲԱՇԳՈՒՆ

Քօրէնակէ կ'ձանուցանեն որ գերման պաշտօնատարները սկսած են միջին Շլէզվիկէն հեռանալ, գաշտարին տրամադրութեանց համեմատ:

ՖՐԱՆՍԱԿԱՆ ԲԱՆԱԿԸ

«Թայմզ» կ'ձանուցանէ որ Ֆրանսական բանակին զօրացումը գրեթէ լըրացած է:

ՀԵԼԼԷՆ ՊԱՐԵՆՆԱՌՈՐՄԱՆ

Բարիզէ հասած վերջին լուրերն, հելլենական խնդրներուն մասին լուստես են, կ'ուսան որ Մ. Նահանգները պիտի հուսանին ներկայացուած տեսութիւններուն և լիւրջ գոհացում տան Բուլաղ խնդրանքներուն:

Մ. ԲՈՒՍԿԱՐԷՆ ՅԱՆԳԼԻՆ

Մ. Բուլաղարէի Անգլիոյ ճամբորդութիւնն որըջուած է Նոյեմբեր 7ին նախազանք ընկերացած պիտի ըլլայ Տիկին Բուլաղարէէ և հիւր պիտի ըլլայ Պիքէնկէմի պաշտպան մէջ Անգլիոյ թագաւորին Հացկերպի մը պիտի տրուի նախազանքն Ուիթսօլի մէջ Նոյեմ. 11ին:

